ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
հեռախոս 099995888

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

թիվ 035/18
01.02.2017թ.

Հարգելի պարոն Նալբանդյան
Հայտնում եմ Ձեզ, որ Ծաղկաբեր համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 23-ի թիվ 1,2,3-Ն,4,5-Ն,6,7 և համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 25-ի թիվ 3 և 4 որոշումները մեր կողմից ս.թ. հունվարի 25-ին ժամը 14անց 27 րոպեին առաքվել է Lori.qartughar@mta.gov.am էլ.հասցեին, սակայն հետագայում պարզվել է, որ տեխնիկական թերության պատճառով չի առաքվել:
Կրկին Ձեզ է ուղարկվում վերոհիշյալ որոշումները:
Առդիր՝ 30 թերթ:

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-099995888

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23 » հունվարի 2017 թվականի N 1

«ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԻԱԾԱՆ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով հաշվի առնելով, որ « Ծաղկաբեր համայնքի «Ծիածան» նախադպրոցական ուսումնական հաստատություն » ՀՈԱԿ-ը իր գործունեությունը իրականացնում է շենքում, որտեղ ջեռուցման համակարգը չի աշխատում և ձմռան ամիսներին պակասում են ՀՈԱԿ հաճախող երեխաների թիվը, ինչի հետևանքով ՀՈԱԿ-ը իր գործունեությունը իրականացնում է ոչ լիարժեք,

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. 2017 թվականի փետրվարի 1-ից «Ծաղկաբեր համայնքի «Ծիածան» նախադպրոցական ուսումնական հաստատություն » ՀՈԱԿ-ի աշխատանքները դադարեցնել;
2. «Ծաղկաբեր համայնքի «Ծիածան» նախադպրոցական ուսումնական հաստատություն » ՀՈԱԿ-ի աշխատանքերը վերսկսել 2017 թվականի ապրիլի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Բորջյան Աստղիկ		0	0
Իգիթյան Արամ		0	0
Իսրայելյան Ահարոն		0	0
Հելելյան Գևորգ		0	0
Ղազարյան Գագիկ		0	0
Նահապետյան Հովհաննես		0	0
Սարգսյան Սարգիս		0	0

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-099995888

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23 » հունվարի 2017 թվականի N 2-Ն

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՈՏԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18 կետի պահանջներով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. 2017 թվականի արոտի վարձավճար սահմանել համապատասխանաբար՝
   1գ. կովի համար ------1000 դրամ
   1գ. մոզու համար ----- 500 դրամ
   1գ. ոչխարի համար ---250 դրամ
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 8-ի թիվ 11-Ն որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Բորջյան Աստղիկ		0	0
Իգիթյան Արամ		0	0
Իսրայելյան Սիարոն		0	0
Հելեյան Գևորգ		0	0
Ղազարյան Գագիկ		0	0
Նահապետյան Հովհաննես		0	0
Սարգսյան Սարգիս		0	0

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-099995888

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2017 թ. N 3 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաբեր համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 28-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Բորջյան Աստղիկ		0	0
Իգիթյան Արամ		0	0
Իսրայելյան Ահարոն		0	0
Հելեբյան Գևորգ		0	0
Ղազարյան Գագիկ		0	0
Նահապետյան Հովհաննես		0	0
Սարգսյան Սարգիս		0	0

Համայնքի ղեկավար՝ Հ.Հովհաննիսյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնքի ավագանու
2017 թ. հունվարի 23-ի թիվ 3 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Տեղական տուրքերի դրույքաչափերը

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

1.1 հիմնական շենքերի և շինությունների համար՝
մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար չորս հազար հինգ հարյուր դրամ

1.2 սույն կետի 1.1 ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հազար դրամ.

1.3 -500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.

2. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

2.1 մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հարյուր դրամ,

2.2 մինչև 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

3. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

3.1 չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ.

3.2 բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի 3.1 ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3.3 նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

4. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

5. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

5.1 ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար հինգ հարյուր դրամ:

5.2 - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հինգ հարյուր դրամ:

5.3 - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ:

5.4 ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար հինգ հարյուր դրամ:

5.5 - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հինգ հարյուր դրամ:

5.6 - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ:

6. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

7. համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

7.1 հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

7.2 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ

7.3 - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ

8. ոչ հիմնական շինությունների ներսում՝

8.1 - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հարյուր դրամ.

8.2 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հարյուր դրամ.

8.3 - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար երկու հարյուր դրամ.

9. ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

9.1 ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ վեց հարյուր դրամ.

9.2 թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար երկու հարյուր դրամ.

9.3 սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

9.4 այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.

9.5 դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

10. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ երեք հազար դրամ.

Տեղական վճարների դրույքաչափերը

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքում սահմանվում են վճարների հետևյալ դրույքաչափերը

1 համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար չորս հազար դրամ:

2 համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը երկու հազար դրամ

3 համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը երկու հազար դրամ

4 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ ութ հարյուր դրամ փոխհատուցման վճար:

5 **Աղբահանության վճարի դրույքաչափը**

1. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1)կենցաղային աղբի համար՝

Ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ)բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ

Ծաղկաբեր համայնքի ղեկավար՝ **Հ.Հովհաննիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-099995888

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2017 թվականի N 4

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ,ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 75-րդ հոդվածներով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել Ծաղկաբեր համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն կից հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաբեր համայնքի ավագանու 28.11.2016թ. թիվ 29 որոշումը
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Բորջյան Աստղիկ		0	0
Իգիթյան Արամ		0	0
Իսրայելյան Ահարոն		0	0
Հելելյան Գևորգ		0	0
Ղազարյան Գագիկ		0	0
Նահապետյան Հովհաննես		0	0
Սարգսյան Սարգիս		0	0

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված

Ծաղկաբեր համայնքի ավագանու
2017թվականի հունվարի 23-ի թիվ 4 որոշման

Ծաղկաբեր համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հատիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնական դրույքաչափը /Հազար դրամ/
Համայնքի ղեկավար	1	230.0
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	150.0
Համայնքի ղեկավարի օգնական	1	100.0
Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար	1	140.0
Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ	1	135.0
Համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	2	120.0
Համայնքի ղեկավարի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	1	75.0
Տեխսպասարկման անձնակազմ		
Տեխնիկական աշխատող՝	1	73.0
Հավաքարար	1	73.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-099995888

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23 » հունվարի 2017 թվականի N 6-Ա

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետով, և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1.Ստեղծել Ծաղկաբեր համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման(կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

Հովիկ Հովհաննիսյան- համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ
Անահիտ Շահբազյան - համայնքային ծառայող, խորհրդի քարտուղար
Սարգիս Սարգսյան - ավագանու անդամ, խորհրդի անդամ, համաձայնությամբ
Հովհաննես Նահապետյան- ավագանու անդամ, խորհրդի անդամ, համաձայնությամբ
Նորիկ Հովհաննիսյան- համայնքի բնակիչ, խորհրդի անդամ, համաձայնությամբ
Գոռ Հելելյան- ավագանու անդամ, խորհրդի անդամ, համաձայնությամբ
Ռուզաննա Գևորգյան- համայնքի բնակիչ, խորհրդի անդամ, համաձայնությամբ
Արմեն Նահապետյան- համայնքի բնակիչ, խորհրդի անդամ, համաձայնությամբ
Ռուդիկ Առաքելյան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ, համաձայնությամբ

2.Խորհրդի գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ի «Համայնքի ավագանու 2013թ.նոյեմբերի 29-ի թիվ 14-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 21-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 23-Ա որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Բորջյան Աստղիկ		0	0
Իգիթյան Արամ		0	0
Իսրայելյան Ահարոն		0	0
Հելելյան Գևորգ		0	0
Ղազարյան Գագիկ		0	0
Նահապետյան Հովհաննես		0	0
Սարգսյան Սարգիս		0	0

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-093670701

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվար 2017 թվականի N 7

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ և 21-րդ կետերով, համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Ծաղկաբեր համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 28-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման , զինծառայությունից ազատվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Բորջյան Աստղիկ		0	0
Իգիթյան Արամ		0	0
Իսրայելյան Ահարոն		0	0
Հելելյան Գևորգ		0	0
Ղազարյան Գագիկ		0	0
Նահապետյան Հովհաննես		0	0
Սարգսյան Սարգիս		0	0

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Ծաղկաբեր համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 23-ի թիվ 7 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Բորջյան Հովհաննես	տաս հազար դրամ
Գևորգյան Մանուկ	տաս հազար դրամ
Մանուկյան Արսեն	տաս հազար դրամ
Պետրոսյան Բաբկեն	տաս հազար դրամ
Հովսեփյան Սմբատ	տաս հազար դրամ
Գևորգյան Գևորգ	տաս հազար դրամ
Զուլալյան Հովիկ	տաս հազար դրամ
Քալամյան Սարգիս	տաս հազար դրամ
Սարգսյան Արտակ	տաս հազար դրամ
Սահակյան Երանակ	տաս հազար դրամ
Մինասյան Սպարտակ	տաս հազար դրամ
Նահապետյան Սերգո	տաս հազար դրամ
Մելքոնյան Ռուստամ	տաս հազար դրամ
Մանուկյան Սուսաննա	տաս հազար դրամ
Մանուկյան Անդրանիկ	տաս հազար դրամ
Վիրաբյան Նվեր	տաս հազար դրամ
Նահապետյան Գևորգ	տաս հազար դրամ
Հովսեփյան Անդրանիկ	տաս հազար դրամ
Վարդանյան Վարդան	տաս հազար դրամ

Ընդամենը՝ հարյուր իններսուն հազար դրամ

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք,

էլ.Փոստ՝ tsaghkaber.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25» հունվարի 2017 թվականի N 3

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍՈՒՍԱՆՆԱ ՌՇՈՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սուսաննա Ռշոյանի 2017 թվականի հունվարի 1-ի հայտը ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-որ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Ծաղկաբեր համայնքի 1 փողոց, տնակ 30 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Սուսաննա Ռշոյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Հ.Հովհաննիսյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԲԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

25 հունվարի 2017թ

ՈՐՈՇՈՒՄ N 4

Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի և ինքնակամ կառույցները օրինական ճանաչելու մասին

Հարգելով համայնքի բնակիչ Գևորգ Ջանլաթյանի և նրա ընտանիքի մյուս անդամները 23.01.2017թ դիմում խնդրանքը այն մասին որ Ծաղկաբեր համայնքում 0048-0017 ծածկագրի տակ գտնվող 0.19895հա սեփականության իրավունքով իրենց պատկանող տնամերձ հողամասի վրա, հանգուցյալ Խաչիկ Ջանլաթյանի և ընտանիքի մյուս անդամների կողմից 1992թ կառուցվել է 138.62քմ մակերեսով բնակելի տուն, 38.88քմ անասնագոմ, 7.8քմ մառան:
Խաչիկ Ջանլաթյանի մահից հետո 2007-2015թթ մյուս համասեփականատերերի կողմից բնակելի տանը կից կառուցվել է 43.58քմ մակերեսով ինքնակամ կառույց, 14.7քմ բաց պատշգամբ, 13.25 քմ խոզանոց, 1.68քմ օժանդակ շինություն:
Նկատի ունենալով , որ կառուցման վերաբերյալ փաստաթղթերը չեն պահպանվում, տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, և օրենքով պահանջվող շահերը , վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60- րդ հոդվածի ցանկում, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների 10.06.2008թ , 27.04.2010թ ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 1004 և 18.05.2006թ 912-Ն որոշումներով, <Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին> օրենքի 29 հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով <Արտյոմ Սաքանյան> ԱՁ –ի կողմից կազմված հատակագիծը և հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի կողմից ընդունված 30.03.1991թ թիվ 8 որոշումը

ՈՐՈՇԵՑԻ

1. Օրենքի ուժով օրինականացնել Ծաղկաբեր համայնքում 0048-0017 ծածկագրի տակ գտնվող 0.19895 հա մակերեսով տնամերձ հողամասի վրա 2007-2015թթ ինքնակամ կառուցված 43.58 քմ բնակելի տան մասը, 14.7քմ բաց պատշգամբը, 13.25քմ խոզանոցը և 1.68քմ օժանդակ շինությունը:

2. Օրենքի ուժով ճանաչել Գևորգ Ջանլաթյանի, Հասմիկ Կարապետյանի և Կարեն Ջանլաթյանի սեփականության իրավունքը 0.19895հա մակերեսով տնամերձ հողամասի վրա կառուցված 182.2քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան, 14.7քմ բաց պատշգամբի, 38.88քմ անասնագոմի, 7.28քմ մառանի, 13.25քմ խոզանոցի և 1.68քմ օժանդակ շինության նկատմամբ:

3. Հանձնարարել ֆինանսական բաժնին իրականացնելու ինքնակամ կառույցների համար օրենքով սահմանված վճարումների գանձման աշխատանքները՝ գանձելով ընդհանուր 29600 /քսանինը հազար վեց հարյուր /ՀՀ դրամ գումար :

4. Որոշումն ընդունման օրվանից ինքնակամների օրինականացման համար սահմանված վճարները 60- օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Չեղարկել 21.12.2016թ ընդունված թիվ 23 որոշումը :

5.Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը որպես հիմք վերը նշված անշարժ գույքերին պետական գրանցում տալու համար:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ